



## 71. ՖԱՅԻԶ

Մեկ մարդ կերպեր արտը, ըռնճպրութեն կենըր, կընըկ խաց կը տաներ, կընըկ ինչ կը խասներ արտ, զկընըկ կը պառկացըցեր քամկը վերեն, մատնիք տը դներ ճակտը վերեն, նետ-անեղ զար-ներ, մատնըքը օղենի ընցըցեր, կըսեր. - Կընըկ, էլ մարդ աշ-խարհի վերեն կըտրըծ կա”, թե” իս:

Տարիին թե երկու վերեն ընցավ, ախչկան մեր իրի ախչկան մոտ, եսաց. - Ախչի՛, դիւ վըրե” ընցկնեն մոնացիր իս:

Ախչիկ մոր եսաց. - Ի՞նչըխ տը չըմոնանամ, խաց կը տանիմ արտ, իս տը պառկըմ, իմ իրիկ մատնըքը ակ դընե վար իմ ճակ-տըն, նետ-անեղ գը զարկե, մատնըքը օղեն ընցըցե, չուր ադա նետ ընցընե, իմ խուգըն կըլնը քանց կուրկըմ խատ: Կըսը. «Աշ-խորքի վրեն կըտրըծ մարդ կա”, թե” իս մնակ»:

Մեր եսաց. - Վաղ խաց կը տանըս, ինչ ան կըսը. «աշ-խորքը.....», դիւ ասա՝ Սուլթան Մուրատ քանց քի կըտրըծ ի վար ախչըրքըն:

Առավուտուն կընըկ խաց առջ, տարավ, իրիկ էլմ զկընըկ պարկացըցուց վար քամկին, մատնըքը ակ իդի վար ճակտըն, նետ-անեղ իզար... գինաց, եսաց. - Կընըկ, մարդ ախշըրքի վրեն կըտրըծ կա”, թե” իս մնակ:

Կընիկ եսաց. - Սուլթան Մուրատ վար ախշըրքին քանց քի կըտրըծ ի:

Մարդ եսաց. - Խաց ըզը խարամ կենա, չուրը Սուլթան Մու-րատը հույութուն չառըմ, տըսնամ ի՞նչ մարդ ի:

Կընըկ դարձավ, իրի տուն, Ֆայիզն էլ էլավ, ընկավ ճամ-քախ, գինաց: Գինաց, թա օր’մ, թա երկու օր, թա քսան օր գինաց:

Օրին մեկ կերթա Սուլթան Մուրատը կոնախ ըլնը:

Դըրիկուն խաց կը դնըն ան տե, ղայֆե կը դնըն:

Ֆայիզ խաց կուտը, ղայֆեն ձեռ կը բըսնը, օր խըմը:

Սուլթան Մուրատ կըսը. - Դիւ դի՞ւ տ'էրթաս:

Աղ էլ զՍուլթան Մուրատ չըճանչնա, ֆնճան ձեռ կըսը. - Իս Սուլթան Մուրատը անուն լսիր իմ, տ'էրթամ, կան գամ, տըսնամ ի՞նչ մարդ ի:

Սուլթան Մուրատ էաց. - Գուրծ չունըս խիտ:

Աղ էլ էաց. - Չէ, պետք ի իս էրթամ, տըսնամ:

Սուլթան Մուրատ էաց. - Իս Սուլթան Մուրատնըմ տըսի, իս անհւ կասեն լսիրըն, քիւ ղայֆեն խըմը, իս անհւ կասեն քի խամար էնիմ:

Էսաց. - Մինչիվ դիւ անհւ կասեն զգի խամար չենիս, իս քիւ ղայֆեն չըմ խըմը:

Էսաց. - Դա՛, եղբար, ղայֆեն խըմը:

Էսաց. - Անհւ կասեն չենիս, խարամ ըլնը, թե քիւ ղայֆեն խըմիմ:

Էսաց. - Ֆայի՛զ, քիւ ֆնճան չըթափիս:

Էսաց. - Իս շաբաթ'ն սայիս'ն կը բըներ, ան կը սպաներ, մեկն էլ կը բըներ: Ինչ սայիս կը բըներ, բիրեր, կըսեր. «Դիւ իմ ծիան աղեկ չըպախիս, զքի կը սպանիմ»: Քանի սայիս բընիցը, մեկ չըկըրցան ծիանք աղեկ պախին: Օրեն մեկ գինացը պազար, մեկ մարդըն տիսա, ըսցը. «Չըս ըլնը» սայիս», եղա մարդն էլ էսաց. «Իս սայիսութենի իտև կան կը գամ»: Իսն էլ ան մարդ առը, տարը տուն, ասցը. «Նա իմ գարըն, նա էլ իմ խուտ, նա էլ իմ հարդ, իմ ծիանք լավ պախոցըր, պախոցըր, օր չըպախոցըր, ինչ կը թըմը ութ օր, զքի կը սպանըմ»: Աղա մարդն էլ յեմ էտուր ծիանքտիրուն, ջրից զծիանք, մտածից. «Բանըմ կա աղա տեղ, անհւ խամար ծիանք կը մոնանան, թե չէ գարը տան, խուտ տան, հարդ տան, ընչո՞ւ խամար մոնանան: Իս ասէւր մինչիվ լուս տը կենամ հաշար, նոպա պախիմ»:

Սայիս մնաց հաշար մինչև կեսգըշիր:

- Ֆայի՛զ, ֆնճան չըթափիս:

Կեսգըշիրըն տըսավ՝ մեկ փակըխի դիւր էրաց, զսիվ ձըն արձըկից, զթանք էզար քամկը վերեն, զձըն քեշըց դիւս, խիծավ:

Սայիսն էլ տըսավ՝ իմ կընըկս ի, են էլ գրիզ ծըն խիծավ, իտու իտիվ կընկան:

- Ֆայի՛զ, քիւ ֆնճան չըթափի՞ս:

Գացըն մանչ դաշտըն, սայիսն ի կընկան չըխասնը, զատը կը մնա: Մաղարե՛մ կեր մանչ դաշտըն, զծըն կապըն մաղարը բիրան, քանունա ամսուն մտավ նիրս: Սայիսն էլ տըսավ էրկու գլխեն դև ադա մաղարեն վեր:

Կընըկ ինչ խասավ ան տե, դև էլավ կանգնավ, էսաց. - Քառսուն նա փետով կը զանըն քիւ օռուն, դիւ շուտ չէկըր:

Իմ կընըկ էսաց. - Իս հ՞նչըն տը գեր, Սուլթան Մուլատ շուտ չոքնավ, իս քնո ուլնիք բալեր անհւ ականջ, գեր:

Կընըկ էսաց. - Դիւ հերդովցիր իս, քառսուն փետ տը զանիս զգի, իլի՛, էրկու դարպ տո՛ւ, նա ցըխավիլուվ զա՛ր ծը, կընը քառսուն դարպ:

Դիվն էլ իլավ, զկընկան վուր իտու վի, էրկու դան կույաթըթախս ցըխավիլով իզար վար վուռուն, էսաց. «Դիւ անգամ մ'էլ անագան չըգան»: Աղա կընկան մոտեն լաճըն, ախչիկըն դիվուց իլավ: Սայիսն էլ դարձավ, իրի տուն: Իրի, իմ ակընջեն քնո ուլնիք էխան, զիս քնուց էխան վի, էսաց. - Իլի՛, էրթանք փակախ:

- Ֆայի՛զ, քիւ ֆնճան չըթափի՞ս:

Սայիս ըզը տարավ փակախ, էսաց. - Սուլթան Մուլատ, հի՞ւր ի քիւ սիվ ծըն:

Իսն էլ ասոցը. - Դիւ իս աս տե պարկը, իս գտի՞մ հիւր ի:

Էսաց. - Քիւ սիվ ծըն քիւ կընըկ քեշից դուս, խիծավ, գինաց:

- Դի՞ւր գինաց:

Էսաց. - Գինաց մատ էրկու գըլխեն դև:

Էսաց. - Անիկ ինչ սիվ ծըն խիծավ, իսն էլ բիզ ծըն խիծավ, իտիվ գացը. Էսաց ինչ օր տըսած էր...:

- Դիւ ճամբախ գտիս, էրթաս ան տե:

Էսաց. - Քիւ ծիանք սովորուկ ին, կէրթան, մաղարի դիւր կը կանգնըն:

Ֆայի՛զ, մինքն էլ տիսանք՝ դև, կընըկ, զըոկ ու ծուց իլաժ, պառկած ա տե, լաճ, ախչիկ մ'էլ իլի դիվուց, ըսոցը. - Դարձի՛, էրթանք:

Դարձան, էկն տուն, սայիս էսաց. - Տըսա՛ր, ինչ կանտար մեղք իս էրի, սպանի զմարդիկ:

Իսն էլ ըսղցը. - Բան չըկա:

Գինացի տուն, քնո ուլնիք իդի ականջս, պարկա:

Լուսն էր, կընըկ իրի, ծըն կապօց փակախս ու գինաց տուն:

Քնո ուլնիք իմ ակընջեն էխան, էսաց. - Սուլթան Մուրատ, իլի՛ վի, աս օր քինանք, չակախանք:

- Թը լիւսնա, իմ նաճրատեղ մոտիխաս ա, մհլիկ կերթամ:

Իսն էլ էլա վի, զղայֆեն խընք, խաց կիրա ու զիմ խուրծ թըլի վար ծիուն. զիմ թուր կապօցը, ծըն խիծա, տողրու գինացի մաղարի դռան վերեն կայնա, ծըն կապօցը մաղարը դիւռ, զթուր թեշիցի, բընիցի ծեռ, մըտա մաղարեն:

- Ֆայի՛զ, զքիւ ֆնճան չըթափիս (հալա դայֆեն բըներ էր ծեռ):<sup>32</sup>

Զղիկ սպանիցը, զդիվու գլիխս կըտրիցը, լաճու գլիխս, զախչկան էլ կըտրիցը, ըբիր զլաճու գլիխս, ախչկանն էլ իթալ ճամ, դիվուն իթալ ճամ, զծըն խիծա, իրի դիւռ կայնա. - Կընըկ, էրի՛, նեճիր ա՛ռ, տա՛ր տուն:

- Ասօր ի՞նչ շուտ նեճիրից էկըր:

- Ասօր իմ նեճիրատեղ մոտիխաս էր:

Կընըկ զխուրծ առըց, տարավ տուն, զխուրճը թիրան բացից, էսաց. - Նեճիր խանիմ, տըսնամ:

Տըսավ համ լաճու, համ ախչկան, համ դիվու գլիխս: Խասավ, զմրազը վարուց առըց, դարազը իզար վար իմ քամկըն, էսաց. - Մրազը վարուց, քննե կուզըն Սուլթան Մուրատ յոթ տարի ըլնը ջուրը: Ֆայի՛զ, քիւ ֆնճան չըթափիս:

Յոթ տարը էլա ջուրը, փետ կրիցը:

Յոթ տարը ինչ թմընավ, մրազը վարուց էզար վար քամկըս, էսաց. - Մրազը վարուց, քինե կուզըն յոթ տարը էլ Սուլթան Մուրատ ըլնը շուն:

Յոթ տարը էլա շուն, ընկա փուղանքտիր, կան էկը, օրե մեկ գինացի քինուցս տուն, դռան հեռճիկ կայնա:

Քինըս, ուր իրիկ խաց կուտեն, իրիկ իրիշից զիս, էսաց. - Ըսիկ, էս շան աչքիր կը ննանը Սուլթան Մուրատը հաչքիր:

Էսաց. - Դու Սուլթան Մուրատ չի՞ս:

Իսն էլ գլխով ըրը:

<sup>32</sup> Ծ.Ա.:

Կընըկ էսաց. - Ասըկ իմ քհւրոջ բանիրն ի:

Իրիկ էսաց. - Ինչըխ տ'ըլնը, ելմ էնինք իսան:

Կընըկ էսաց. - Պըղընծ'ն ջուր կը տաքցնիք, իս կերթամ, խավքինըն կը խագնիմ, զմրազի վարուց կը բռնիմ իմ կտուց, կը փախնիմ, կը գամ: Իմ քհւրն ել հիտիվեն կը գա, ինչ կը գա ինի վար ծի, իս զմրազը վարուց կը թլիմ տակ, դու զմրազը վարուց կը բռնըս քիւ ծեռ, կը զանիս Սուլթան Մուրատ քամկըն, կըսըս. «Յա մրազը վարուց, Սուլթան Մուրատ էլմ էնիս հառաջի Սուլթան Մուրատ»: Միք վիրուց կըռվընք կուգանք տակ, ծի կը մոտանանք, դու կը զանիք-զանըկ կեցգիք: Զանըկ կեցգիք մանչ պըղընծը ջրուն, կը խաշըր, կազատվըր մոտեն:

Կընըկ էլավ, խավքինըն խագավ, թռավ, գինաց քհւրոջ տուն, խատ քհւրոջ խուսավ: Գինաց դեն, երի դեն, քհւր մեկն ել տըսավ էզար, մրազը վարուց առըց, գինաց: Քհւրն ել զհւր խավքինին խագավ, թռավ, մինչիվ քհւր խասավ, էնի վարուց թլից տակ: Քհւրուց իրիկ զմրազը վարուց առըց, էսաց. - Յա մրազը վարուց, Սուլթան Մուրատ էլմ էնիս հառաջի Սուլթան Մուրատ:

Դարա մ' իզար:

Իսն էլ էլա հառաջի Սուլթան Մուրատ:

Երկու քհւր վիրուց կըռվան, էկըն տակ:

Իսն էլ ըսըցը. - Զանինք ըցգինք մանչ պըղընծի ջըուըն:

Քինուց իրիկ էսաց. - Երկուսն էլ զանինք, էցգինք մանչ պըղընծին. չէ՝ անի էլ անհւ քհւրն ի, քիւ կընըկ ինչըխ երաց խաքի, անի էլ սկուն տինն խա ծը:

Ինչ մատացան, զարկըն, երկուսն էլ էցգին մանչ պըղընծը ջըրուն, խաշան:

- Սուլթան Մուրատ, - էսաց, - դիւ կը կարգվիս, քիւ քեյֆն ի, չըկարգվիս՝ քիւ քեյֆն ի:

- Ա՛ ախչըկ, ինչ իսընը կաթ ծըծիր ի, իս անհւ ախչիկ շառնըմ:

Իսն ամին օր կերթեր նեճիր, օրեն մեկ նեճիրից իկի, մանչ ճամբիսկւն տըսա բալիկ'ն դրած, ծիուց իջա տակ, զբալիկ բացի, տըսա ախչըկ նուր իլի: Փաթութած՝ դրած վար ճամբիսւն:

- Ֆայիհ'զ, գքիւ ֆնճան չըթափըս:

Էդտեղ զախչըկ փաթըթիցը, ըսըցը. - Տանըմ, իմ խերու խամար պախիմ:

Գինացի նեճիր, խազալըմ բռնիցը: Կըթիցը, իտու ախչկե, կիրավ, մինչիկ միծացավ: Ախչըկ ինչ միծացավ, պսակիցը վար ծը: Լաճ, ախչըկ մ'էլ իլավ: Մեկ ժամանակ'ն վերեն ընցավ, լաճ, ախչըկն էլ միծացան. իսն էլ կառներ զիմ կընըկ, զլաճ, ախչիկ կերթեր նեճիր, անցկուն զմենեկ կուզընք, ավուր'ն ճամբախ խապար տալեն կերթենք, ընք ակախը վար մեմեկը:

Օրե մեկ էլանք, ընկանք ճամբախ գինացընք, անցկուն գինացընք, էրկու ավուր ճամբախ հեռացանք, գըշիոը էլ չըկարցան գենք: Մնացընք դիւս, գացընք, մտանք հեր'ն ինի տըսանք՝ ինչ Աստված ստեղծի կերակուլ, եղա հերի մեջ կա:

Ըսցը. - Իս գըտիմ, էսա հեր անտեր չի: Երթանք, պաղկվինք էնա քհւնճ, ասոնց տեր գան, վար մի չակըխըն, ակըխին, զմի կը սպանըն: Առավուտուն շուտ երթանք:

Գացընք, մտանք ան քիւնճ մինչիկ հըրիկուն, հըրիկուն տըսանք քանոսուն խատ դիվ ին հեղա հերը տակ: Նստան, զուրինց խաց, կերակուլ դընըն, պատրաստըն, կիրան, խման:

Գնըն ինչ կը լըցըն, կտան հըրարու, կըսըն. - Սուլթան Մուրատը կընկան կինացը, թու խանը կաթ չըկերի, միծացը:

Դիր'ն, էրկու, անցկուն ասոցըն. Սուլթան Մուրատը կընըկ ակըխավ, էսաց. - Մարդիկ, զձի խազ'ն կուգան:

Իսն էլ. - Աստուժու սիրուն ըլնը, իաշ կաց դիւտ խազաս, անհւնք տը ակըխըն, ալ մի ազատուն չըկա:

Քիչ էլ մնաց, անհւնք ամին տըսըն. - Սուլթան Մուրատը կընկան կինաց:

Կընըկ էսաց. - Մարդիկ, էլ զգի չըմ կերի զավթը, իմ խազ կը գան:

- Գլխիս մտու իմ ծուց ինի, գաղտիւկ խազա՛, չակախըն:

Կընըկն էլ քանը կերցավ, ճոաց, դկիրն էլ ակախան, գացըն առըն, բիրըն, ասըն. - Մինք ցիրիկուվ քիւ հիտիկ կան գիգենք, դիւտ գօշիրուվ ընկար մի ձեռ:

Ըզը զընճլով կապօցըն սուն վի, ճրագ դրըն վար գլխաւս, կընըկ առըն մեջքիր, կեսգըշիրըն միծ դև առըց զկընըկ, պառկավ ան տեղ:

Քիչ'ն մնաց, ախչըկ ակախավ: Էլավ ջուր առըց, խմավ: Իրի տը պառկեր, - Աստե իմ ձեռքիր քիչ'ն թուլցըցուն, իս մեռա, - ըսըցը:

Ախսըկ էսաց. - Դե՛, կը մնջի՞ս, չէ իմ ջուզ խոր կըսիմ, ունը քհւ ջուզ փրդիւր քհւ ականջ էնը:

- Ախսչի՛, սիւր կըսըմ, գնա՛, պառկը՛:

Քիչ' մնաց, տըսա տըղեն գինաց դիւս, իրի, ըսըցը. - Այ որդի, քիչ' իմ ծեռդիր թուլցըցու՛:

Էսաց. - Ի՞նչին թուլցըցիմ:

- Գինա՛, թուր կա տուն՝ զլխու տակ, ա՛ռ, բի՛:

Թուր առըց, իրի: Տըղեն պըզտիկ ի, թուր միծ ի, չըկերի կըտորը: Քսից-քսից, կըտորց կապիր:

Ըսը. - Որդի՛, գինա՛, պառկե՛:

Իսն էլ զընճըլ իմ մոտեն քակիցը, թուր առը, գինացը, տաս դիվու գլխին կըտորիցը, իրի, կայնա սան առաջ: Տրագ դըրը վար իմ գլխուն:

Դիվ էսաց. - Սուլքան Մուլրատ, ի՞նչ էրազըս տըսի:

- Էրազ դիւ իս տըսի, Սուլքան Մուլրատը կընկան ծուց դիւ իս քինի, թու իսընի կաթ չըկերի, իս էրազ' մ տըսա, քառսուն ճընճուդ տեղ' մ են, բաշող իզար վերեն, տաս սպանից, մնաց եռսուն:

Դիվ էսաց. - Ան աչքով դիւ լուս չըս տըսնա, ան գուրծ ինչ դիւ կան կը գնա, շատ իեռու ի:

Դիվ քինավ, գրուր առը, տասը վզըն էլ կըտորիցը, քիսան սպանիցը, մնաց քիսան: Ելմ իմ տեղ կանգնա, տրագ դըրը վար իմ գլխուն:

Դիվ էլմ ակախավ, էլավ, նստավ, էսաց. - Սուլքան,... ասօր գըշիր ինչ էրազ իս տըսի:

- Իս էրազ չըմ տըսի, էրազ դիւ... իս էրազ' մ տըսի, քառսուն ճընճուդ տեղ' մ ին, բաշող իզար վերեն, քիսան սպանից, մնացըն քիսան:

Էսաց. - Ան ինչ դիւ կըսըս, քհւ զաքքուվ չըս տըսնաս:

Գլխին եղի գետըն, էլմ քինավ: Իսն էլ թուրն առըցը, գինացը տասնի վզզն էլ կըտորըցը, մնաց տաս:

Դիվ էլավ, էլմ նըստավ, էսաց. - ....:

Իսն էլ ըսըցը. - Իս էրազ' մ տըսա, քառսուն....:

Դիվ էսաց. - Ծոահաթ կա՛ց, դիւ եղա բան չըս տըսնա:

Դիվ էլմ պառկավ, քինավ:

... Թուր առըցը, գինացը, ինն դև սպանիցը: Մնաց միծ դև:

Դիվ էլավ, նըստավ, էսաց. - ...

Իսն էլ ըսդցը. – Զմենն էլ սպանիր իմ, մնացիր իս դհւ մնակ, ինչ կենիս, երե:

Դիվ կանգնավ ուր տեղեն, դևն ու իսն էլ առընք հիրուր, կըօզվ:

Դիվ ինչ կը կոռի, կընըկ կըսը՝ դև, դե՛, դև, սպանե՛, իս ժխն քհւն իմ, ինչ իս զդէ կը կոռեր, կընըկ կըսը՝ դե՛, Սուլթա՞ն Մուրատ, դե՛, սպանե՛, ժխն իս քհւն իմ:

- Ֆայի՞զ, զքու ֆնճան չըթափիս:

Զարկը, զդև սպանիցը, իլա, տըղեն առըցը, հերեն իլա դհւս, ջաղչի քար տըվը հեռցիվ դրան: Կընըկ, ախչըկ մնացին հերու մեց, զտըղեն առըցը, գինացը:

Մեկ ժամանակ'ն վերեն ընցավ:

- Այ որոդի, էլի՛, էրթանք, տըսնանք՝ աղա կընըկ, աղա ախչըկ ինչ կենիս:

Գացընք հերը հեռցիվ, քարը ծակեն իրիշիցը, տըսա՝ կընըկ լեշիր կերի, զախչըկն էլ կերի:

Աչ ընկավ իիս, եսաց. - Սուլթա՞ն Մուրատ, Աստուծո՛ւ սիրուն, քիւ էրես բի՛, անա քարը ծակուն թամաշա ինիմ՝ նկր թուղ մեռնիմ:

Իսն էլ էրիս տարա հեռցիվ քարը ծակուն: Ան էլ ձեռ իթալ, գերեսի կղանց կըտուց, իթալ բիրան:

Իսն էլ կընըկ թուղի, զլած առըցը, իկի քաղաք: Թոպա էրը, ալ չըպսակվա: Ֆայի՞զ, նա Սուլթա՞ն Մուրատը կասեն քի խամար, որ կասին էլ չըս խավատար, Սուլթա՞ն Մուրատ իս իմ:

Ինչ կասեն թմըմից, Ֆայիզն էլ ֆնճան ձեռ մեռավ:

